ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻՖԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Կեսոյան Հ. Ա. (ԵՊՀ, Երևան, ՀՀ)

h.kesoyan@gmail.com

Հոդվածը նվիրված է ժամանակակից սոցիալական միֆերի ուսումնասիրությանը, դրանց ձևավորման և կիրառական նշանակության բացահայտմանը: Անդրադարձել ենք նաև սույն թվականին ՀՀ-ում տեղի ունեցած «թավշյա հեղափոխության» ընթացքում օգտագործված տեխնոլոգիական լուծումներին, որոնց ռազմավարական կիրառությունը հիմք է հանդիսանում սոցիալական իրականության վերակառուցման և ժամանակակից նոր միֆերի ձևավորման համար:

Հանգուցային բառեր՝ *սոցիալական միֆ, միֆոլոգիական մտածողություն, հասարակական գիտակցություն, ներգործություն, առասպել, հեղափոխություն, պայքար, մեթոդներ:*

Միֆը մշտապես մեկնաբանվում է որպես անգիտակցական գործունեության արդյունք և որպես երևակայության ազատ խաղի դրսևորման ձև: Սակայն առասպելը ստեղծվում է համապատասխան որոշակի պլանների: Նոր առասպելները չեն ձևավորվում պատահականության սկզբունքով, ինքնաբուխ, դրանք միայն երևակայության պտուղ չեն համարվում: Ընդհակառակը, նրանք իրենցից արվեստի ստեղծագործություններ են ներկայացնում՝ ստեղծված հմուտ վարպետների կողմից: Տեխնոլոգիական քաղաքակրթության դարաշրջանում անընդհատ մշակվում են առասպելների ստեղծման նոր միջոցներ, որոնք սկզբունքային նշանակություն ունենալով՝ կարող են փոխել մեր սոցիալական իրականության ընկալումը:

«Միֆը խոսք է, արտահայտություն, ասույթ: Միֆը հաղորդակցական համակարգ է, հաղորդագրություն: Հետևաբար՝ միֆը չի կարող լինել առարկա, ըմբռնում կամ գաղափար: Այն նշանակության միջոցներից մեկն է: Միֆը ձև է»: Սակայն ինչպես նշում է Ռ. Բարտը, այդ ձևն ունի պատմական սահմաններ, օգտագործման պայմաններ, սոցիալական բովանդակություն: Ե՛վ հնում, և՛ այժմ միֆը կարող է իր հիմնավորումը գտնել միայն պատմության մեջ, քանի որ միֆը խոսք է՝ ընտրված պատմության կողմից, այն չի կարող ծագել իրերի «բնությունից» [3; էջ 111-112]:

Գ. Պոչեպցովը համարում է, որ առասպելը ունիվերսալ կառույց է, որը միշտ կարելի է լցնել որոշակի բովանդակությամբ. «Առասպելը հանդես է գալիս որպես իմիջի ձևավորման սցենար, որտեղ անմիջապես լցվում են գլխավոր հերոսի բարեկամների և թշնամիների մինչ այդ դատարկ տեղերը: Առասպելը

համարվում է ամբողջական կառույց, և սա է նրա օգտակարությունը, քանի որ մեծ թվով անհրաժեշտ բնութագրեր ի հայտ են գալիս ինքնըստինքյան՝ տանելով հասարակական գիտակցությունը դեպի այս կամ այն առասպելը» [7, էջ. 105-106]:

Առասպելի կառուցվածքն ունի մի շարք եզակի գծեր, որը թույլ է տալիս քաղաքական տեխնոլոգներին ստեղծել արհեստական տեխնոլոգիական առասպելներ: Սակայն հարցը միայն առասպելների ստեղծումը չէ: Տեխնոլոգիական առասպելը վերջին հաշվով կեղծ առասպել է, քանի որ չի հիմնվում արքետիպերի վրա, որոնք իրականում առասպելի սնուցիչներն են: Ամեն ազգ ունի իր արքետիպային առանձնահատկությունները, քանի որ արքետիպերը ձևավորվում են տվյալ ազգի պատմության սկզբում: Ձևավորվելով՝ դրանք ուղեկցում են տվյալ ազգին իր ողջ պատմության ընթացքում: Էթնոսի հոգեկան ակտիվության բազմաթիվ դրսևորումներն ամրապնդվում են ազգային մշակույթում [1]:

Լինելով կոլեկտիվ գիտակցության երևույթ՝ առասպելը ձևավորում է որոշակի աշխարհընկալում, հոգեբանական և գաղափարախոսական դիրքորոշում, որը պարուրված է նախապաշարումներով:

Առասպելում առկա են նաև հետևյալ առանձնահատկությունները.

- անգիտակցականի վրա հիմնված լինելը,
- իրականի և իդեալականի միաձուլումը,
- մտքի իմպերատիվությունը. առասպելը որևէ գործողության է դրդում հենց միայն գիտակցության մեջ գոյություն ունենալու փաստի շնորհիվ, այն կառավարում է մեր վարքը,
- ընկալման չտարբերակվածությունը՝ սինկրետիզմը, երբ երևույթը չի ենթարկվում ձևական տրամաբանության օրենքներին. միևնույն երևույթը կարող է պատկանել երկու իրականությունների (մենք հասկանում ենք, որ, օրինակ, տվյալ քաղաքական գործիչը դժվար թե միայնակ կարողանա երկիրը փրկել, սակայն մյուս կողմից, հենց այդ հանգամանքն էլ դառնում է նրա օգտին քվեարկելու մեր փաստարկը) [6, էջ 123]:

Առասպելները և խորհրդանիշերը չեն անհետանում կոլեկտիվ անգիտակցականից, և ժամանակակից աշխարհում՝ նոր պատմական և մշակութային պայմաններում շարունակում են աշխատել որոշ փոփոխություններով և երբեմն քողարկված տարբերակով: Մ. Էլիադեն համարում էր, որ ներկա հասարակությունում գործում են քաղաքական առասպելները, որոնք տարբերվում են սոցիումի ընդգրկվածության մասշտաբով և սոցիալական միֆերը, որոնք կապված են մարդկային կյանքի հետ [5]:

Արդյունավետ հաղորդակցումը պետք է հաշվի առնի այն, որ ազդեցության տարաբնույթ հնարքները, կարծրատիպերը, զուգորդություններն ու արձագանքները երբեք մասնատված և ինքնաբերական չեն լինում, դրանք մեկը մյուսի հետ որոշակի հարաբերությունների մեջ են մտնում և այդպիսով

հասարակական գիտակցության մեջ կայուն սոցիալական հավատալիքների համալիրներ են ձևավորում: Ժամանակակից հետազոտական ավանդույթը դրանք սոցիալական առասպելներ (միֆեր) է անվանում:

Սոցիալական միֆը, որպես սոցիալ-մշակութային ֆենոմեն, մեծ տեղ է զբաղեցնում ժամանակակից հասարակության քաղաքական, տնտեսական և հոգևոր կյանքում: Այս ոլորտում կատարվել են բազմաթիվ ուսումնասիրություններ, բայց կան շատ հարցեր և բաց կետեր, որոնք խորը ուսումնասիրման կարիք ունեն: Առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում փոխհարաբերությունները՝ կապված համաշխարհային քաղաքակրթության և <<քաղաքակիրթ ընտրության>> հետ: Այս և այլ խնդիրների ուսումնասիրմամբ զբաղվել են Ա. Ֆ. Լոսևը, Մ. Էլիադեն, Պ. Ս. Գուրևիչը, Բ. Ա. Ուսպենսկին, Տ. Վ. Չերեդնիչենկոն: Վաղ ժամանակներից, միֆոլոգիայի առանձին ասպեկտների ուսումնասիրմամբ զբաղվել են Ֆ. Նիչշեն, Զ. Ֆրեյդը, Կ. Գ. Յունգը և այլոք:

Ըստ Գուրևիչի, միֆը, այդ թվում նաև նրա սոցիալական մարմնավորումը դիտվում է որպես թերի աշխարհայացքային երևույթ, քաղաքական և գիտական բանավեճերի չհասունացման արդյունք, միևնույն ժամանակ բարոյական պահանջների ցածր մակարդակի հետ քաղաքական տեխնոլոգիաների հետևանք [3]:

Դիցաբանությունը դեռ հին ժամանակներից քաղաքականության անբաժանելի մասն է կազմել, իսկ սոցիալական միֆերը՝ հասարակական գիտակցության մանիպուլացման, այն վերափոխելու կարևոր գործիք: Ըստ Ռ. Բարտի «միֆը ոչինչ չի թաքցնում և ոչինչ ցույց չի տալիս, նա վերափոխում է, նրա մարտավարությունն է՝ ոչ ճիշտ և ոչ էլ սուտ, բայց շեղող» [3, էջ. 289]:

Ինչ-որ ձևավորված նպատակի հասնելու համար, ինչպես օրինակ գլոբալիզացիայի մասին պատկերացում ունենալու համար, ներկա ժամանակներում լայնորեն օգտագործում են հասարակական գիտակցության վրա տեղեկատվական ներգործությունը: Նման ազդեցության ամենաարդյունավետ մեթոդը հասարակական գիտակցության մեջ միֆերի ներմուծումն է, որոնք առաջին հերթին ազդում են անգիտակցականի վրա, քանի որ նրանք մեծամասամբ հանդես են գալիս նշանների ձևով, և ուղղակի ձևով չեն առերեսվում ռացիոնալ մտածողության հետ, փորձում են տեղ հասցնել իրենց մտադրությունը անուղղակի ճանապարհներով [5, էջ; 188]:

Սոցիալական միֆերի ազդեցության տակ պետությունների և ազգերի ծագման և զարգացման պատմությունները, որպես կանոն, խեղաթյուրված և միֆականացված են այնքանով, որ դրանց օբյեկտիվ վերլուծությունը տեսականորեն հնարավոր է իրականացնել տարբեր աղբյուրներից կրիտիկական համեմատություններ: Սակայն, մեծամասամբ այն պրակտիկորեն անհնար է նախապաշարմունքներից, սուբյեկտիվությունից կամ տեղեկատվության տարբեր աղբյուրներից օգտվելու սահմանափակումներից ելնելով:

Մասնագետները նշում են, որ զանգվածային սոցիալական միֆերի ծագման և տարածման հնարավորությունները ներկա հասարակությունում ոչ թե նվազել, այլ մեծ քանակությամբ աճել են:

Սոցիալական միֆերը կատարում են հետևյալ գործառույթները՝

Կայունացնող, երբ հասարակությունը վարպետորեն հաջողությամբ հաղթահարում է զարգացման դժվար փուլերը;

Համախմբող, երբ հասարակությունը մոբիլիզացնում է ուժերը ընդհանուր խնդիրները լուծելու համար;

Կլանող, պահանջմունք որոնք ծագում են հասարակության մեջ նոր մեծ խմբերի ներգարվման կամ զանգվածային արտագաղթի և նոր պետական միավորումների ձևավորման ժամանակ;

Մեկուսացնող, որը բնակչությանը կամ մարդկանց խմբերին բաժանում է մասերի, ստեղծելով պայմաններ նրանց վրա բռնություններ գործադրելու համար;

Ապակայունացնող, լայնորեն կիրառվում է ընդդիմադիրների կողմից հասարակության բաժանման և իրենց նպատակներին հասնելու համար [2]:

Սոցիալական միֆերը լայնորեն օգտագործվում են հասարակության բոլոր մակարդակներում և հասարակական կյանքի բոլոր ոլորտներում, հատկապես ազգային քաղաքականության և միջպետական հարաբերություններում:

Որպես միֆերի ստեղծման հատուկ հնարք հատկապես հաճախ օգտագործվում են սոցիալական գիտակցության մեջ ամրապնդված նախատիպերը, երբ արդեն գոյություն ունեցող և ընդունված միֆային կերպարը հարմարեցվում է ժամանակակից քաղաքական իրականությանը: Այսպիսի միֆի հաջողության առաջին նախապայմանն այն է, որ ենթագիտակցորեն նմանություն է առաջանում նոր երևույթի և հնի միջև, որի ելքն արդեն հայտնի է [5, էջ; 107-109]: Միֆ ստեղծելու տարբերակ է նաև որոշակի իրականության հիման վրա նոր պատմություն ստեղծելը, որի փաստերի մեծամասնությունը կապված չէ իրականության հետ: Կիրառվում է նաև բացարձակ սուտ միֆային սյուժե հորինելը [5, էջ. 165]:

Աշխատելով սոցիալական միֆերի տեսության վրա՝ Ժ. Սորելը ուսումնասիրել է հեղափոխության դիցաբանական կառուցվածքը: Հեղափոխությունը Սորելի կողմից համարվում է որպես իռացիոնալ պայթյուն, անխոհեմ ոգևորություն, որի արթնացման գործիքը միֆն է: Միֆը հույսերի և ցանկության իրականացումն է գործողությունների միջոցով, այն միջնորդ է գործողությունների և գաղափարի միջև: Կենտրոնական գաղափարներից մեկը, որի վրա կառուցվում է ցանկացած ապստամբություն, ընդհանուր կոլեկտիվ կամքն է [10, էջ. 82]:

Ժ. Սորելի փաստարկներում հեղափոխությունը հայտնվում է որպես մեծածավալ սոցիալական աղետ, որը ուղղված է մարդկային ստեղծագործական ներուժի ազատմանը, որը կարող է վերացնել սոցիալական առաջըն-

թացի բոլոր արհեստական խոչընդոտները: Արմատական ստեղծագործական խթանը բաղկացած է՝

- ժողովրդի կամքից (ըստ Սորելի ՝դա մոբիլիզացիա է),
- բռնությունից, որպես հին պատվերով փոխազդեցության միակ ձև,
- հոգևոր իդեալից՝ նոր պատվերի գաղափարից:

Ապստամբության և հեղափոխության հիմնական դիցաբանական նախագծման մասին խոսելով՝ Սորելը այն անվանում է բռնության առասպել: Այն միշտ ուղեկցում է հեղափոխական մոբիլիզացիայով, երբ անհրաժեշտ է հաղթել հին կարգին առավել արմատական ձևով: Համագործակցությունը և սոցիալական խաղաղությունը միշտ էլ բավականին պայմանական են, իսկական հեղափոխությունը կարող է ունենալ միայն մեկ ձև՝ ապստամբ բռնություն: Հեղափոխական բռնությունն առաջին հերթին ստեղծագործական խթան է, որի մեջ բռնությունը ինքնանպատակ չէ: Այն անհրաժեշտ է ժողովրդի մոբիլիզացիայի համար և առանձնանում է միայն պատասխանատվությամբ, ազնվականությամբ և անձնազոհության բարոյականությամբ [10, էջ. 138-139]:

Ըստ Դե Մեստրեի և ժ. Սորելի, հեղափոխությունն այն տարրն է, որը բարձրացել է գիտակցության դեմ: Այն մտքի գործիք չէ, այլ մարդկային ռացիոնալության պատմական ուժի դրսևորում և հաստատում. «Մարդկանց կառավարում է հեղափոխությունը, և ոչ հակառակը: Հեղափոխական հոսքը հետևողականորեն ուղղված է տարբեր ուղղություններով, իսկ հեղափոխության ամենահայտնի մարդիկ ստանում են որոշակի ուժեր միայն այս հոսքի մեջ»: Եվ նույնիսկ այս պայմանով, «...իշխանությունը հալածելու է բազմությանը, չկարողանալով վերահսկել այն: Այն մարդիկ, ովքեր հեղափոխություն են վարում, նրանք ինքնին այն օգտագործում են իրենց սեփական նպատակների համար» [10, էջ 14-18]:

Անդրադառնալով սույն թվականի ՀՀ-ում տեղի ունեցած «թավշյա հեղափոխության»-ը, ինչպես նաև «իմ քայլը» շարժմանը և ուսումնասիրելով հեղափոխության ընթացքում կիրառվող տեխնոլոգիական գործիքակազմը, կարող ենք առանձնացնել մի քանի տեխնոլոգիական հնարքներ, որոնք նպաստել են հեղափոխության կայացմանը, ինչպես նաև մատնանշել սոցիալական միֆի որոշ գործառույթներ, որոնք դրսևորվեցին հեղափոխության ողջ ընթացում:

Առանց որևէ կրակոցի, այսպես կոչված, «թավշյա հեղափոխությունը» Հայաստանում իրողություն դարձավ ի շնորհիվ նախապես մշակված տեղեկատվական-հոգեբանական ներգործության, քաղաքական տեխնոլոգիաների ռազմավարական կիրառմանը: Հեղափոխության ողջ ընթացքում մեծ կիրառություն են ստացել Ջին Շարփի մեթոդները: Նա հավաքել, ի մի է բերել և մանրամասն նկարագրել է ոչ բռնի պայքարի 198 մեթոդներ, ինչպես նաև դրանց փոխազդեցության որոշ տարբերակներ,որոնց միջոցով կարելի էր վարել քաղաքական պայքարը, որոնք, ըստ իրենց տեսակի, դասակարգված են

հետևյալ երեք խմբերի՝ ոչ բռնի բողոք և համոզում; հրաժարում սոցիալական, տնտեսական և քաղաքական համագործակցությունից; ոչ բռնի միջամտություն:

Ոչ բռնի պայքարներ լայնորեն մղվել են բազմազան մշակույթներում, տարբեր պատմական ժամանակաշրջաններում և քաղաքական պայմաններում: Պայքարի մղող հիմնախնդիրները տարբեր են եղել՝ սոցիալական, տնտեսական, էթնիկ, կրոնական, ազգային, հումանիտար և քաղաքական [8]:

Իսկ ի՞նչ էր առաջարկում Ջին Շարփը՝ «ոչ բռնի պայքարի Մաքիավելին», որն իր ողջ կյանքը նվիրել է ոչ բռնի պայքարի ռազմավարության մշակմանը: Ոչ բռնի պայքարի մեթոդները դասակարգվում և բնութագրվում են ըստ գործողության տեսակի, այլ ոչ թե դրանք կիրառող մարդկանց շարժառիթների կամ համոզմունքների: Հեղինակը խոսել է իշխանությունների հետ համագործակցության չգնալու երեք կատեգորիաների մասին ՝

սոցիալական (ներառում է 16 մեթոդ), քաղաքական (38 մեթոդ), տնտեսական: Վերջինս իր հերթին բաժանվում է բոյկոտների (26 մեթոդ) և գործադուլների (23 մեթոդ) [4]:

Շարփի մեթոդների թվում են հրապարակային ելույթները, հաստատությունների և կազմակերպությունների միանալու կոչերը, հայտնի մարդկանց ուղղված հրապարակային հայտարարությունները, դատապարտումը, փողոցների արգելափակումը և այլն:

Լայն զանգվածների հետ աշխատելիս կիրառելի են՝ լոզունգները, ծաղրանկարները, խորհրդանիշները, պամֆլետները, մագնիտոֆոնային ձայնագրությունները, օդում ինչ-որ բաներ խորհրդանշական բաց թողնելը, «փողոցային» օրենքների սահմանումը, հեղափոխական «աքսեսուարների» կիրառումը: Եթե զուգահեռներ տանենք՝ հայաստանյան շարժման ժամանակ այս ամենը նկատելի էին: Հեղափոխության անբաժան մաս դարձած լոզունգները դրական մեծ ազդեցություն ունեցան մարդկանց և, հետևաբար, շարժման վրա և նույնիսկ դարձան հասարակության լեքսիկոնի անբաժանելի մասը [8]:

Նիկոլ Փաշինյանի՝ ուսապարկով ու զինվորական շապիկով կերպարը ևս նախապես մշակված գործիք էր, որն անշուշտ, ունեցավ իր դրական արդյունքը: Նրա արտաքինը, մորուքը, հագուկապը (բեյսբոլի գլխարկ, զինվորական վերնաշապիկ), մեջքին մշտապես ուսապարկը, կապած ձեռքը, երգը, որը հնչում է, բոլորը մեկ ոճ ունեին: Դա պատահական չէր արված: Իհարկե, նրա ձեռքը վնասվել էր, բայց դա պայքարողի կերպարն է, ով վնասվածք է ստացել պայքարելուց: Ըստ առասպելներից մեկի՝ ձեռքի վերքի պատճառը ոստիկանության հետ բախման ժամանակ արձակված լուսաձայնային նռնակն է, ըստ մեկ այլի՝ Փաշինյանը փշալարի միջով փորձել է ներխուժել Ազգային Ժողովի շենք: Զինվորական համազգեստը ինքնին զուգորդվում է պայքարի, բանակի, անվտանգության, արիության հետ, իսկ ներկայիս Հայաստանում այն նաև ունի դրական զուգորդումներով սիմվոլիկա՝ հայրենիք, հայրենասիրություն, նվիրում և այլն:

«Մարդկանց համար էական կերպարների, խոսուն խորհրդանիշների հետ զուգորդումներ կային ամեն քայլափոխի: Նա և՛ Գանդին է, և՛ Մանդելան, կապած ձեռքը նրան մոտեցրեց Մոնթեի կերպարին, բայց այդ ամենը դիտարկվում էր որպես պայքարի, անձնազոհության և հերոսության խորհրդանիշ» [9]:

Փաշինյանը գրեթե իր բոլոր ելույթներում դիմում էր ժողովրդին՝ «ինչպես կասի ժողովուրդը», «ինչպես կորոշի ժողովուրդը», այդպիսով ժողովրդական առաջնորդի, հասարակ մարդկանց հասկացող ժողովրդից դուրս եկած մարդու իմիջ ստեղծելով: Իսկ ժողովրդական առաջնորդի կողմից ժողովրդին դիմելը բնական գործընթաց է, այդպես է եղել նաև Գանդիի և Մանդելայի պարագայում: «Ժողովրդական առաջնորդը» հենց նման կերպար է ենթադրում: Դրանով նա հիմնավորում է իր հետագա քայլերը՝ ցույց տալով, որ մարմնավորում է ժողովրդի ակնկալիքները, քանի որ նրան, ինչպես և ժողովրդին, դուր չի գալիս այն ամենը, ինչ տեղի է ունենում երկրում: Ժողովրդին դիմելը ենթադրում է, որ նա պատրաստ է լսել նրանցից յուրաքանչյուրին և հաշվի նստել նրանց կարծիքների հետ:

Անդրադառնանք նաև հեղափոխության հիմնական կարգախոսին՝ «քայլ արա»-ին: Հրամայական եղանակի միջոցով շարժման կազմակերպիչները արտահայտում են իրենց կոչն ու հորդորը քայլ անելու, իսկ օգտագործելով եզակի թիվ՝ անձնավորում են կոչ-հորդորը: Հոգեբանության մեջ ապացուցված է, որ անձին դիմելու դեպքում մարդիկ ավելի շատ են արձագանքում, քան խմբակային կոչերի դեպքում: Մեկ այլ կարգախոս է «դուխով»-ը: Այս բառը դարձել է այժմյան Հայաստանի անբաժան մասնիկը և շատ հասկանալի պատճառով. կոչը հորդորում է չվախենալ և չերկնչել, իսկ խոսակցականությունը հարազատության երանգ է հաղորդում բառին:

«Հաշվի էր առնվել նաև այն փաստը, որ մարդիկ ավելի հաճախ փողոց են դուրս գալիս ոչ թե հանուն, այլ ընդդեմ որևէ բանի»: «Շատ էին ֆուտբոլային խորհրդանիշերը՝ իսլանդական ֆուտբոլի երկրպագուների ծափեր, ինչը միավորում և տաքացնում էր լսարանին, ազարտ մտցնում: Հետևաբար, շարժումն ի սկզբանե տարբերվում էր՝ քիչ խոսք, ոչ մի խոստում, ոչ մի ծրագիր ու փաստարկներ: Լսարանը բաղկացած էր նախկին շարժումների մասնակիցներից, ովքեր հասկանում էին իրավիճակի պատասխանատվությունը, և նրանք ամեն ինչ արեցին, որպեսզի այդ շարժումը չձախողվի: Չափազանց զգույշ էին և ուշադիր մանրուքների հարցում:

Ըստ Ջ. Շարփի, եթե ժողովրդավարը բռնապետի հետ համաձայնում է բանակցությունների գնալ, ուրեմն ընդունում է հակառակորդի ուժը: Ըստ նրա, «բանակցությունները» չեն նշանակում, որ երկու կողմերը նստում են սեղանի շուրջ և հավասարության սկզբունքով քննարկում ու լուծում միմյանց միջև ծագած հակասությունները»: Եթե այս համատեքստում դիտարկենք, ապա կտեսնենք, որ Նիկոլ Փաշինյանը բանակցությունների չգնաց Սերժ Սարգսյանի հետ, նշելով, որ խոսքը ոչ թե երկխոսության մասին է, այլ իրենց առաջարկած

օրակարգի մասին: «Ես եկել եմ այստեղ քննարկելու Ձեր հրաժարականի պայմանները եւ իշխանության խաղաղ, անցնցում փոխանցման պայմանները», - հայտարարեց Փաշինյանը: Բանակցություններ չեղան նաև փոխվարչապետ Կարեն Կարապետյանի հետ:

Շարփի մեթոդներում առկա է արվեստի, մասնավորապես՝ գրականության, երգի երաժշտության կիրառումը, ինչը տեսանք նաև հայկական հեղափոխության ժամանակ. ծնվեցին հայտնի երգերը «Քայլ արա, մերժիր Սերժին» վանկարկումներով, երգեր ծնվեցին ռեփից մինչև երևանյան ֆոլկլորի ժանրում:

Շարփը առաջարկում է հայտնի մարդկանց վրա ճնշումներ, ծաղր, զինվորների հետ եղբայրացում, երթեր, ցույցեր, հանրահավաքներ, ավտոերթեր և այլն: Այդ ամենը եղավ նաև Երևանում՝ զինվորներ, իրավապահներ, առողջապահության ոլորտների ներկայացուցիչները միացան շարժմանը, իսկ հակառակ կողմից հնչում էր «Ոստիկանը մերն է» կարգախոսը, ցուցարարները գրկախառնվում էին ծանր զրահատեխնիկա տեղափոխող ծառայողների հետ [8]:

Ըստ Ջ. Շարփի, «Մշակույթները, լեզուները, կրոնները տարբեր են, բայց բոլոր իշխանավորները սովորական մարդիկ են: Նրանք իշխանությունը ստանում են: Նրանք իշխանություն ունեն, քանի դեռ մարդիկ հավատում են նրանց, քանի դեռ աշխատում են իրենց բյուրոկրատիայում, ոստիկանությունը հրամաններ է կատարում և այլն» [4]: Նաև հավելել է, որ դա է իշխանության աղբյուրը և պետք է գտնել իշխանության «Աքիլեսյան գարշապարը»՝ «հիմք նախապատրաստելով համակարգի հիմնարար փոփոխության կամ ոչնչացման համար»:

Եվ այսպես, կարելի է ամրագրել, որ տարաբնույթ տեխնոլոգիական լուծումներն այսօր լայնորեն օգտագործվում են ինչպես նպատակային – քաղաքական «գունավոր հեղափոխություններում», այնպես էլ տարաբնույթ բողոքի երթերի և հանրահավաքների ընթացքում, որոնց թիվը շարունակաբար աճում է ողջ աշխարհում՝ փորձ կատարելով առանց լուրջ հետևանքների «պարպել» հասարակությունում կուտակված լարվածությունը: Նմանատիպ երևույթները խթան են հանդիսանում տարբեր հասարակություններում ձևավորել նոր սոցիալական իրականություն, որտեղ հին և նոր միֆական դրսևորումները հնարավորություն են տալիս արմատականացնել ցանկալի գաղափարախոսությունը և ազդեցությունն առավել երկարատև պահել:

Գրականություն

1. **Асриян Э. В.** Этнический и политический миф как фактор формирования общественного мнения; Przeglad wschodnioeuropejski (East European Review). 2017, VIII/1, pp. 161-172

2. **Ардашкин И. Б.** Феномен мифологической проблемы // Известия Томского политехнического университета. 2008. Т. 312. № 6. С. 125-130.

3. **Барт Р.** Избранные работы. Семиотика. Поэтика. М., Прогресс, 1994. стр. 111-112.
4. **Дж. Шарп** «198 методов ненасильственной борьбы», http://www.aeinstein.org/wpcontent/uploads/2013/10/The-198-Methods-of-Nonviolent-Action-Russian-.pdf
5. **Элиаде М.** Мифы, сновидения, мистерии / М. Элиаде. — Москва, 1996.
6. **Черепанова И. Ю.** Заговор Народа: Как создать сильный политический текст, Москва,КСП+, 2002.
7. **Поцелуев С. П.** «Символическая политика»: к истории концепта // Символическая политика. Вып. 1. Конструирование представлений о прошлом как властный ресурс. М.: РАН ИНИОН, 2012. 334 с.
8. **Gene Sharp,** Waging Nonviolent Struggle: Twentieth Century Practice and Twenty-First Century Potential. Boston: Porter Sargent, 2005)
9. http://www.noravank.am/img/detail.php?ELEMENT_ID=14903
10. **Сорель Ж.** Размышления о насилии / Пер. с фр. В.М. Фриче. М.: Польза

SPECIFICATIONS OF SOCIAL MYTH FORMATION IN MODERN SOCIETY

Kesoyan H.A. (YSU, Yerevan, RA)

The article focuses on the study of contemporary social myths, their identification and detection of their applied purposes. We also touched upon the technological solutions used during the "Velvet Revolution" that took place this year in Armenia, the strategic use of which is the basis for the reconstruction of social reality and the formation of modern myths.

Key words: *social myth, mythological thinking, social consciousness, influence, myth, revolution, methods, struggle.*

СПЕЦИФИКАЦИИ СОЦИАЛЬНОГО МИФОВОГО ФОРМИРОВАНИЯ В СОВРЕМЕННОМ ОБЩЕСТВЕ

Кесоян А.А. (ЕГУ, Ереван, РА)

Статья посвящена изучению современных социальных мифов, их идентификации и выявлению их прикладных целей. Мы также коснулись тех технологических решений, которые использовались во время «Бархатной революции», которая состоялась в этом году в Армении, стратегическое использование которой является основой для реконструкции социальной реальности и формирования современных мифов.

Ключевые слова: *социальный миф, мифологическое мышление, общественное сознание, влияние, миф, революция, методы, борьба.*